

Ծ Ւ Ա Ծ Ա Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ, ՆՈՐԱԼՈՒՐՔ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑԻՑ.

Գարնան հետ մէկտեղ քաղաքական խնդիրներն եւս սկսան շարժում առնուլ, եւ գրեթէ օր չանցնիր որ նոր նոր լուրերով չհաստատուին այն կասկածներն ու վախերը որ քանի մը ամսէ իմեր եւրոպայի շատ կողմերը տիրած են:

Իտալիոյ մէջ Ռիքազոլիին ոստիկանութեան պաշտօնէն ելնելն ու Ռաթացցիին անոր տեղը անցնիլը՝ այնչափ մեծ նշանակութիւն մը չունի այն երկրին ներկայ եւ ապագայ գործողութեանցը համար, որչափ կարիպալտիին Իտալիոյ զանազան քաղաքները պարտիլն ու պատերազմական ատենախօսութիւնք ընելը:

Աւտորիոյ կայսրը Վենետիկի գնացեր է ու կյուսայ որ իւր ներկայութեամբը այն քաղաքն ու գաւառը աւելի զօրաւոր կերպով պաշտպանէ բազմաթիւ զօրքովն ու զէնքերովը ընդդէմ իտալացւոց 500,000 զօրքին որ պատրաստ է Վենետիկոյ ազատութեանը համար պատերազմելու:

Հոռմի մէջ պապին աշխարհական իշխանութիւնը հոգեվարք հիւանդի ինմանի. վասն զի մինչեւ եկեղեցականներն եւս սկսեր են համարձակ խօսիլ եւ գրել թէ այս իշխանութիւնը ոչ միայն հարկաւոր չէ, այլ եւ

վնասակար եւս է պապին հոգեւոր իշխանութեանը:

Գաղղիոյ կայսեր կառավարութեանը մէկ քանի ինդիքներուն վրայ այնպիսի համարձակ ատենախօսութիւններ եղան Փարիզու օրէնտրական ժաղավոյն մէջ որ տասը տարիէ իմեր նմանը աեմնուած չէր:

Բրուսիոյ թագաւորը սահմանագրական կառավարութեան ազատութիւնները ամիսին վել ուղելով՝ մեծ վտանգի մէջ ձգեց այս օրերս իւր երկրին խաղաղութիւնը:

Յունաստանի ապատամբութիւնը բոլորովին հանդարտած չէ, եւ կերեւի թէ հանդարտելիք եւս չունի՝ քանի որ եւրոպական Տաճկաստանին մէջ չերսէկի, Պարասաղի, Սըրֆի եւ ուրիշ երկիրներուն պատերազմները գագելու տեղը՝ օր ըստ օրէ կաւելնան ու կսաստկանան: Կարիպալտին կամ իւր զօրքը կապատէի Գաբրատաղի կողմերը, եւ գուցէ այն յուսով աւելի ալ անհանգստութեան մէջ են բոլոր եւրոպական Տաճկաստանի քրիստոնեանները: Մաճառները յայտնապէս կրսեն թէ Աւտորիոյ ձեռքէն ելնել կուղեն, եւ Քոշոթին խորհրդովը նոր թագաւորութիւն մը հաստատել իրենց քովի ոլաւեան աղգերուն հետ գաշնակից:

Ն Ե Բ Ի Ւ Լ Ա Ի Բ Ե Բ .

ՆՈՐ Ա.ՕՒՒՏՐԱԿԱՆ ԳԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՅ ԵՒ ՕՍՄԱՆԵԱՅՅ.

Օսմանեան տէրութեան եւ Ռուսիոյ մէջ եղած նոր առեւտրական դաշնադրութեան մէջ գլխաւոր փոփոխութիւնները սոքա են.

ա) Տաճկաստանէն եկած ապրանիլներուն մաքսը առաջ որ անոնց արժեքին 100-ին 42 էր, այժմ պիտի լինի 100-ին 8:

բ) Ռուսաստանէն Տաճկաստան տարուած ապրանիլներուն մաքսը առաջ որ անոնց արժեքին 100-ին 3 էր, այժմ եղաւ 100-ին 8. այս մաքսը պիտի առնու նաեւ Ռուսիոյ ցո-

րեններէն:

ց) Մնցողական մաքսը (բրանգիր) առաջ որ 100-ին 3 էր, այժմ պիտի լինի 100-ին 2:

զ) Սըրիլուած է աղ ու ծխախոտ տանիլը Տաճկաստան, իսկ երբար այդ նիւթերը Տաճկաստանէն Ռուսիա բերուին, մաքս չառնուիր:

ե) Օսմանեան հաղատակները հրաման չունին այսուհետեւ Տաճկաստանի մէջ մենավաճառութեամբ առուտութիւնը ընելու իրենց երկրին բերքերովը: